ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով ՀՀ վարչապետի աշխատակազմի և «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 09.11.2023թ.-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն կնքված «ՎԱ-ՍԱՏՄ-ԷԱՃԾՁԲ-24/09-1» ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ ստորև ներկայացնում եմ «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00465342) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը.

ՀՀ կառավարությանը ենթակա Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար շենքերի մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով՝ Վարչապետի աշխատակազմի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի միջև 09.11.2023թ.-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն կնքվել է «ՎԱ-ՍԱՏՄ-ԷԱՃԾՁԲ-24/09-1» ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագիր, որի շրջանակում Ընկերության կողմից ներկայացվել են Պայմանագրի ու որակավորման ապահովումներ՝ տուժանքի ձևով:

Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, Պայմանագրի 7.15 կետի համաձայն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Ընկերութանը ներկայացվել է համաձայնագիր կնքելու առաջարկ:

Պայամանագրի 7.15 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական

միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

«ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն վարչապետի աշխատակազմի կողմից տեղեկացվել է համաձայնագիրն ուղարկվելու, գնման ընթացակարգի շրջանակներում իր իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, սակայն վերջինս չի ներկայացրել համաձայնագիրը և չի մատուցել պայմանագրով նախատեսված ծառայությունները: Ուստի, հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը՝ աշխատակազմը միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ 09.11.2023թ. կնքված «ՎԱ-ՍԱՏՄ-ԷԱՃԾՁԲ-24/09-1» ծածկագրով պայմանագրից՝ համարելով այն ամբողջությամբ լուծված:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները վարչապետի աշխատակազմը՝ ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի լուծել է 09.11.2023թ.-ին Օրենք 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն կնքված պայմանագիրը: Միաժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջը՝ Վարչապետի աշխատակազմի և «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի միջև միջև 2023 թվականի նոյեմբերի 9-ին կնքված «ՎԱ-ՍԱՏՄ-ԷԱՃԾՁԲ-24/09-1» ծածկագրով պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու վերաբերյալ հայտարարությունը 15.02.2024թ. հրապարակվել է gnumner.am կայքում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին

տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Ընդ որում, «ՎԱ-ՍԱՏՄ-ԷԱՃԾՁԲ-24/09» ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.15 կետի համաձայն՝ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Այսպիսով, Պատվիրատուն արձանագրում է, որ «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն՝ համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից սահմանված ժամկետում համաձայնագիրը չկնքելով, և տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները նոր ապահովումներով չփախարինելով՝ խախտել է Պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ առկա են «ԷԼԻՏ ԷՍՎԵ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ սահմանված հիմքերը և որոշում եմ՝ Ընկերությանը ներառել նշված ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ